

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿԻՆԵՐ.

I.

ԱՌԱԿԱՆԱՍՈՒԹԻՒՆ. ԵԽ ԽՎԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ ՀԱՅԻԱՅԻ.
(Ի. Ա. Կոփովի մահուան 50-ամեակի առթիւ).

Ա.



Ետերբուրգի ամառնային
պարտիզում զբու-
նողների ուշադրու-
թիւնն է գրաւում
մի արձան։ Մի քանի
աստիճանով պատուան-
գանների վերայ հան-
գիստ և անվրդով, գիրքը ձեռին, նստած է
համակրելի երեսով մի ծերունի։ Իսկ նրա
ուսների տակ, պատուանգանի կողերի վերայ
քանդակած են՝ ժայռեր, ծառեր, թռչուններ
և զանազան գազաններ։ Կարծես այս քան-
դակները բոլորը կենդանի են, շարժուում են,
մի բան անում . . . Ահա կապիկը - ջութակը
ձեռին, իսկ նրա կողքին, մօրուքը բարձրաց-
րած՝ նստած է այծը. առիւծը շրջապատ-
ուած մեծ ու փոքր կենդանիներով, մի բան
է յօշուում։ կռունկը իւր կտուցը խոթել է
գայլի բերանը, իսկ աղուէսը մեզմ քայլե-
րով առաջ է գնում . . . Այդ «Պապիկ» Կոփ-
ովի արձանն է, որի մահուան յիսնամեակը
տօնեց ուսւ հասարակութիւնը անցեալ նո-
յեմիերի Զ-ին։

Իզուր չէ ստացել Կոփովի Պապիկի մա-
կանունը, այո՞ւ, նա բոլոր երեխաների պա-
պիկը գտրձաւ այն օրից, եթե սկսեց գրել
իւր աննման առակները, գեռ շատ ժա-
մանակ նրա առակների ժողովածուն մի տե-
սակ կտակարան կը լինի մանուկ սերնդի հա-
մար։ Ուսւաստանում երեխայ չկայ, որ ծա-
նօթ լինի նրաւ գոնէ մի քանի, առակների
հետ։ Եւ որքան կըթիչ զարդացուցիչ ազ-
դեցութիւն են ունեցել այդ առակները մա-

նուկ սերնդի վերայ ամբողջ կէս դարու ըն-
թացքում

Շնորհիւ Այլազովսկու թարգմանութեա-
նը, որ տաղանդաւոր կերպով հայացրել է այդ-
առակները, մենք, հայերս էլ օգոստել ենք
կոփովի հանճարից։ 60-ական թուական-
ներից ի վեր կրթուցենք մեր երեխաներին
այդ փոքրիկ՝ սրամիտ և իմաստավից զրայց-
ներով։

Կոփովը ծնուել է 1763թ. Մոսկուարում
բայց մանկութեան օրերը անց է կացրել
արեւելեան Ուսւաստանում։ Որէնրուրդ քո-
ղաքում - Պուգաչովի * արստամբութիւնների
ժամանակի, Ընտանեկան ձախորդ հանգա-
մանքները արգելը են դարձել նրա սիստեմու-
թիկական կրթութեան, որի բացակայութիւնը
անհետեանք յէ մնացել և երեւում է նրա բո-
լոր շարադրութիւնների մէջ։ Խւր զարգացու-
մայ նա պարտական է նախ մօրը յետոյ -
ինքնաշխատութեանը։ Կոփովը ուսւ բանաս-
տեղծ Պուշկինի նման, շատ վաղ է սկսել կար-
գալ և շարադրել։ Արդէն 15 տարեկան հաստ-
կումնագրել է հօֆենինիցա** թատերախաղը,
որ աւելի ինքնուրոյն հետաքրքրաշարժ է, քան
նրա յետագայ պիէսները։ Նիւթական նեղ
վիճակի մէջ լինելով 1783թ. Կոփովը իւր մօր
հետ տեղափոխուում է Պետերբուրգ, ուր մըտ-
նում է ծառայութեան, սկզբում երկու բուրիի
ամսական ռոմեկով։ Մի երկու տարի անցնելուց
յետոյ նա արդէն պատրաստում է երկու նոր
պիէսներ, որոնք նրան միջոց են տալիս ծա-
նօթանալու այն ժամանակուայ ուսւ գրակա-
նական խմբերի հետ։ Կոփովը շուտով կա-
րողանում է մի երգիծաբանական թերթի նախ
աշխատակից, յետոյ խմբագիր - հրատարակիչ
գառնալ։ Այսպիսով 1790թ. նա հրատարա-
կախոսական ասպարէզ է ինում և այսու-
հետեւ գրիչը ձեռքն է առնում միմիայն

* Պուգաչովի ապատամբութիւնը տեղի է ունեցել Կա-
տարինէ Ակապունու օրով - 1773.-1775թ.

** Կօֆէնիցա Նշանակում է սովոր միջոցով գուշա-
կութիւններ անող կին։ Նոր նախինեւամսում կա սրա նման
հմայութիւն եւ կոշտում է . Թնթին թափել, սովոր փոխարէն
գործ է ածուում հալեցրած մարդ կամ արժի՛ն

ծաղրի միջոցով մարդկանց պահասութիւնները ուղղելու նպատակով՝ այլ կարելի առել, որ նա իւր երգիծարանութիւնով զարթեցրած լինէր մի նոր խնդիր, կամ մշակած լինէր մի նոր նիւթ. ոչ, նա անշեղ գնացել է իւր նախորդների շաւով և կանտէմիրի՝ ֆոն - վիզինի ու Նովիկովի երգիծանքներն է կրկնել Միայն լեզուի և սրբախօսութիւնների ու հո-ճի կողմից նա զանազանուում է նախորդ ռուս երգիծարաններից: Իւր հասարակական - գրականական համոզմաւնքներովն էլ նա պատկանումէր Հին: սպահպանական խմբին և իւր մի երգիծարանական ճառում կծու ծաղրել էր վերանորոգից Կարամինին և նրա ամբողջ խումբը: Կոլովի այդ շրջանի գրականական վաստակեները ըլ կարողացան հասարակութեան ուշադրութիւնը գրաւել և այդ ժամանակուայ գրուածքներովը չէ որ նա անունն վաստակեց: Գրականական այս և այն ճիւղի վերայ փարձում էր Կոլովի իւր ոյժերը և շատ անդամ՝ յաջողութիւն էր գտնում՝ ինչպէս օրինակ, իւր մի քանի յօդուածներովը, իւր Շառակեռութիւնների խանութ՝ պիէսով և այն. բայց այդ յաջողութիւններն անցողական, բովէական էին:

Վերջապէս 1805 թուականին, Կոլովի գտնում է իւր տաղանդի համար խսկական ճանապարհը: Այդ ժուին է, որ նա բերում է այն ժամանակուայ յայտնի ռուս տռակախօս Դմիտրիեսի մօտ իւր երեք առակները՝ այն է «կաղնին և ձիստար»: «Ըստրոց հարսը» և «Ծերտանին ու երեք երիտասարդներ»: Դմիտրիեսը կարողում էր շատ է հաւանում և յորդորումէ Հեղինակին նուիրել իրան գրականական այդ ճիւղին: Սակայն միմայն երկու տարի անցնելուց յետոյ Կոլովի հետեւումէ այդ խորհուրդին: Կոլովի նիւթական գրութիւնն էլ բարւոքուում է այդ ժամանակը. նա ստանումէ մի ասպահով և հանգիստ պաշտօն, որ վարումէ գրեթէ մինչեւ կեանքի վերջը:

Կոլովի, որպէս առակախօսի հոքակը արագութեամբ տարածուումէ, նրա առակները տպուումեն, կարգացուում և իրեւ ձեռագիր պտառում են ամենուրեք: 1812 թուականի քաղաքական դէսլքերի ասթիւ գրած առակներովը — Կոլովի պալատի ուշադրութիւնն էլ է գրաւում և կայսերական հրովարտակավ 1500 ր. տարեկան թոշակի է արժանանում:

Կոլովի ծոյլ և ծանրաշարժ բնաւորաւթեան աէր լինելով՝ դիւրութեամբ հաշար ուումէր ամեն տեսակ հանգամանքների հետ և, ինչպէս ասումէ նրա կենսագիրներից մէկը, ոյք օրից ի վեր մինչեւ 1841 թուականը (այսինքն մահուանից 3 տարի առաջ) Կոլովի ջիսխեց ոչ ծառայութիւնը ոչ պարապմանը և ոչ էլ բնակարանը: Ընկերներին էլ ջիսխեց, միայն շատերին թաղեց: Երիտասարդական անյաջող և անհանգիստ օրերից յետոյ Կոլովին վիճակուեց տեսնել ծերութեան երկար խաղաղ տարիներ: Միայն ժամանակակի առ ժամանակ երեւան եկադ սրամիտ և գեղեցիկ առակներն էին: Որ յիշեցնում էին ծերունու մասին «, նա մեռաւ 1814 թ. նոյեմբ. 9-ին: »

Բ.

Նախ քան անցնելը Կոլովի տռակների պարունակութեան ու նշանակութեան — մի հայեացք ձգենք առակների պատմութեան վերայ առհասարակ: Առակները նոյնքան հին են, որքոն հին է մարդկային պատմութիւնը, և մինչեւ այժմեան ձեւը ընդունելը — առակը զանազան փափոխութիւնների է ենթարկուել: Սրանցից կյանքնք գլխաւորները:

Այժմեան առակների նախածնօղ պէտք է համարել այն բանաւոր պատմութիւնները կենդանիների մասին: որոնց մէջ՝ ոչ երգիծարանութիւնն կայ և ոչ էլ Գորովի Դրանք — հանգիստ վիպական պատմութիւններ են: որոնց մէջ՝ ժամանակութիւնների կենդանիների կեանքը և իւր աղայական երեւակայութեան մէջ՝ ենթաղրում է,

որ կենդանիներն եւ մարդկանց նման բանական արարածներ են: Այս տեսակ վիպական բանաստեղծութիւնները կոչուում են «կենդանական վէպ» (Thiersage, Thierrepos): * Ժամանակի ընթացքում մարդը ոկտում է փոխել իւր հայեացքը կենդանիների մասին: Միւնչոյն ժամանակ նաև նկառում է՝ որ նրանց մէջ տիրապետող յատկութիւնները գերակշռութիւն միւս բոլոր յատկութիւններից և այդպիսով ամեն մի կենդանի որոշ բնաւրութեան կամ յատկութեան ներկայացուցիչ է զառնում: Ինչպէս օրինակ՝ աղուէսը խորամանկութեան, էշը՝ յիմարութեան կամ յամառաւթեան և այլն: Կենդանիների այդ յատկութիւնից օգտառում են բանաստեղծները և այն ժամանակ երեան են գալիս գրականական ձեռով հէքեամթներ և առակներ կենդանիների կեանքից: Այդ առակների և հէքեամթների նպաստակը զաստիարական է, նրանցից ամեն մէկը մի խրատ է: Հեղինակը իւր առակներով կամենում է ուղիել մարդուս թերի կողմերը վաս յատկութիւնները: և, նայած որ յատկութիւնների վերայ է նա յարձակուելու այդ յատկութիւնների ներկայացուցիչ կենդանուն է առող բերում այսպէս՝ օրինակ, եթէ նա ուզում է ծաղրել մարդուս թուլամորթութիւնը: վախկառութիւնը՝ նապատակին է առաջ բերում կեղծաւորութիւնն կամ խորամանկութիւնը՝ աղուէսին և այն: Այսպէս ենդ, Ք. Յ. Հնդկաստանում Վիշնու—Սարման անունով իմաստառէրը կազմում է Հնդկաց թագաւորի որդիանց համար: Ժողովրդի մէջ պատաճ՝ կենդանիների կեանքից վերցրած խրատական պատմութիւնների մի ժողովածու: Այդ ժողովածուն, որ Հնդկա-

* Առակների ծագման մասին երկու կարծիք կայ. մէկը այն որ մնաց զատկացինք. Նա պատկանումէ Յ. Գիմմին (Reinhart Fuchs, V. I. Grimm, 1835 .): Ուրիշ կարծիք է յայտնում Հէվինտա և Geschicht der poëtischen National—Literatur der Deutschen — շարադրութեան մէջ. Նա կարծումէ, որ առանձին է ծագել եւ զարգացել կենդանական վէպը. (Thierrepos) — առանձին՝ կենդանիների կեանքից առած առակները (Thierfabel):

մատեան (Պանչա—Տանտրա) է կոչուում Ժամանակ անցնելուց յետոյ աղբիր է գառնում մի աւելի նշանաւոր վէպիկների ժողովածուի: Այս ժողովածուն, որի նիւթը նոյնակէս կենդանիների կեանքից է առնուած, կոչուում է՝ «Հիտոպատէսա: Պանչա - Տանտրան այնպիսի հրաշակ է ստանում որ Ը. գարում արարերէն է թարգմանուում «Կալիահ» և Գիմնահ» անունով: Արարերէնից թարգմանուում է յունարէն և այդ յունարէն բնագրից ձևու գ. թարգմանուում է և ուուսերէն:

Յունաստանում դեռ Թ. Պ. Քրիստոսից առաջ Հէսփոգոսը և Զ. Պ. Ստէվաքորասը առակներ գրելու փորձեր են անում: Մօտաւորապէս Դ—Զ. գարերում տպրող հանճարեղ էզովապոսը ժողովրդի մէջ պտտող այլարանական հէքեամթներին ու կենդանիների կեանքից վերցրած վէպիկներին նոր ձեւ է տալիս: Նա բուհ պատմութիւնը (գէպրը անցքը) կրծատում է, բայց աւելացնում է մի նոր մասն՝ պատմութիւնից ողևած խրատ կամ իմաստը (պրօմիւթէօն—Քրօմնէօն եթէ այդ խրատը առակի սկզբին է, Էպիմիթիօն—Էպամնիօն. եթէ առակի վերջն է զրուած): Եզովապոսի կարճ կտրուկ իմաստարից առակները մեծ ընդունէլութիւն գտան թէ նրա ժամանակակիցներից և թէ յոջորդ սերնդից: Գրեթէ բոլոր աղգութիւնները, ի միջի այլոց և հայերը, թարգմանարար կամ վիխարինարար, սեփականեցրին Եզովապոսի առակները: Ամենից մեծ նշանակութիւն ունեցաւ առակների պապայ զարգացման նրկատմամբ Եզովապոսի լատիներէն թարգմանութիւնը:

Առաջին գարում Քրիստոսից յետոյ Հառմանյացի բանաստեղծ Փեղրոսը գեղեցիկ կերպով թարգմանում է Եզովապոսի առակները և աւելացնում է ինքնուրացն առակներ ել: Փեղրոսի առակները արգէն տաղաջախական լեզուով են գրուած: * Սակայն Փեղրոսի ա-

* Սոյն այդ ժամանակներն էր ապրում եւ Բարիխան յոյն բանաստեղծը, որը Եզովապոսի առակները նոյնակէս ուսանաւուների էր վերածեւ

ռակների ժողովածուի բնագիրը—շատ շուտ մոռացուեց։ Նրա փոխարէն մի քանի դար կարգացուում էին Եզովպոսի և Փեղրոսի առակների փոխագրութիւնները։ Ժ. րդ. դարուց սկսած լոյս են տեսնում „Aesoporus“, „Romulus“, „Anonymus“ վերնագրերով առակների ժողովածուներ, որոնք Փեղրոսի առակների արձակ փոխադրութիւններ են։ Խճպէս երեսում է, միջին դարերում առակները սիրով էին կարգացուում։ Մրան ապացոյց է այն առակածե երգիծարանական վէպը, որ իւր գլխաւոր հերոս աղուէսի անունով «Թէյնարդ» է կոչուում։ Այս վէպը նախ լատիներէն է հրատարակուել, յետոյ փոփոխութիւններով և յաւելուածներով զանազան լեզուների ու բարբառների է թարգմանուել և բազմաթիւ նմանողութիւնների օրինակ է դարձել։ Այս երգիծարանական վէպերի վերայ (որոնց հերոսները էլլի նոյն խորամանկ տղուէսն և պարզամիտ գայլն են ինչպէս և Եզովպոսի առակների մէջ)՝ միջին դարերը գնում են իրանց սեփական դրոշմը։ Կենդանիները ստանում են նոր բնորոշ գծեր իրանց բնաւորութիւնների մէջ։ Այսպէս՝ կեղծաւորութիւն, սուտ բարեպաշտութիւն, պատմութիւնների նիւթը շատ անգամ վերցրած է լինում միջնագարեան հոգեռորականների կեանքից, որը արտաքին սրբութեան և բարեպաշտութեան տակ ծածկում էր անառակութիւնն տղիսութիւն, կեղծաւորութիւն . . . Այսպէս օրինակ՝ առակներից մէկը պատմում է, ինչպէս աղուէսը խեղճացած ճանապարհորդում է դէպի Հռովի ապաշխարուելու համար, բայց դուրս է գալիս, որ նրա նպատակն է ապաշխարող ձեռնալով—ճապարհին ամեն տեղ փող հաւաքել, ուտել խմել և առհասարակ ուրիշի հաշուով ապրել։ Ուրիշ անգամ աղուէսը իւր ընկերներով քահանայ է ձեռնադրուում և սովորեցնում է նրանց նոր կարգ ու կանոններ։ Մրանք տյապիսի աղմուկ են բարձրացնում և այնքան ուժգին զանգահարում են, որ գիւղացիները ապշած վազում գալիս են եկի։

զեցի, բայց աղուէսի հետքն անգամ չեն գտնում . . .

Միւնոյն ժամանակ միջին դարերում առակների խրատական մասը սկսում է աւելի մեծ դեր խաղալ և կամաց կամաց գրլիաւոր տեղը բռնել։ Այդպէս, օրինակ, ԺԴ. դարում գերմանացի Բոնէր առակախօսը հրատարակում է առակներից որոնց բոլոր արժեքը կենդրանացած է առակներին կցած իմաստների մէջ, որոնք շատ անգամ մինչև իսկ կապ չունեն առակի մէջ պատմուած գէպքի հետ։ * Այսպիսով առակը կորցնում է իւր բանաստեղծական նշանակութիւնը և գաւնում է գեղեցիկ, կարծառօտ խրատական քարոզ։ ԺԸ. րդ. դարում Լէսոֆինգը մինչեւ անգամ փորձեց առակներին բացառապէս խրատական նշանակութիւն տալու բայց նրա փորձը ի զուր անցաւ, նա շատ քիչ հետեւողներ ունեցաւ։ Ակայն պէտք է ասել որ արգէն ԺԸ. րդ. դարուց նկատուում է և մի ուրիշ հստանք՝ ոմանք առանձին ուշադրութիւն են դարձնում առակների և միւս վիպական մասի վերայ։

Վերջապէս ԺԸ. դ. ֆրանսիացի հանձարեղ առակախօս Լաֆոնտէնի գրչի տակ առակները ստացան այն կերպարանքը, որ կրում էն և այժմ։ Լաֆոնտէնը ճոխացրեց առակները թէ քանակութեամբ և թէ պարունակութեամբ, ներշնչեց նրանց նոր ոգի և կենդանութիւնն, զարգարեց նրանց գեղեցիկ արտաքին զարդարանքներով և ծառացեցրեց, որպէս մի ժամանակ Լուտէրը, աւելի լուրջ և վերացական խնդիրների բացարութեան։ Լաֆոնտէնը հակառակ միջնագարեան առակախօսներին համահաւասար նշանակութիւն էր տալիս թէ առակի վիպական մասին և թէ նրանցից բղխած իմաստին։ Նա այն կարծիքին էր, որ թէպէտ և առակները խրատական նշանակութիւն ունեն, բայց այդ խրատը պէտք է պարունակ-

* Նոյն այդպիսի ընաւորութիւն են կրում եւ Միւթար Քօշի առակները։

ուի վիստական մասի մէջ, պիտի բլիսէ իրեւ պատրաստ եղածակացութիւն առակում պատմուած գէպքից կամ երեսթից, ուստի շատ անգամ կարող է պատահել, որ այդ իմաստը չի էլ ամփոփուում և զետեղուում առանձին, այլ համկացուում է բուն վիստական մասի պարունակութիւնից: Լաֆոնտէնի գեղեցիկ ոճով գրած գողոտիկ և հմտալի առակները մեծ ժողովրդականութիւն ստացան և նա լուսաւորուած ազգութիւնների համար երկրորդ Եղովացոս գարձաւ: Նրա առակները թարգմանուած են գրեթէ բոլոր եւրոպական լեզուներով և սեփական (ինքնուրոյն) առակախօս չունեցող ազգերի գրականական այդ թերութիւնը լրացնում են:

Եղովացոսի, Փեղրոսի, Լաֆոնտէնի հարթած ճանապարհով գնումէ կոլիսվի, որ աւելացնում է իւր նախորդների առակների վերայ սեփական հանճարի թելագրածը և ուսւ ժողովրդի բազմագարեան փորձառութեան արգասիքը:

(Գեղջը միւս համարում)

ՄԻՆԱՍ ԲԵՐԵԲԵՐԵԱՆ.



ՄԱՏԵՆԱԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

Խմբագրութիւնս սյունետեւ իւր բոլոր ստացած զրբերի մասին համառօտ զնկուցումն պիտի տայ:

Ժերենց: Երեսնը—IX—դարու: Այս գերբը ապօռած է, և հրատարակուած 1879 թուականին, բայց այս տարի Աղրիւր—Տարագի խմբ. պ. Տ. Կազարեանը գներով մնացած օրինակները իրեւ ընծայ է տալիս իւր բաժանորդներին: Դիքի սկզբին համեմատարար 1879 թ. հրատարակութեան հետ այժմ աւելացած են: Ճերենցի և նրա աղջկայ պատկերները, մի մի ուսանաւոր Ժերենցի և նրա աղջկայ: Ճերենցի գակասիմելէն և կենսապութիւնը, և պ. Եղեկեանցի գականականը Ճերենցի գակաղի վրայ: Մենք յոր ունենք գրտնել այստեղ մի նոր և ամփափ կենսապութիւն, սակայն որքան զարմացանք, երբ աեսանք, որ դա ոչ այլ ինչ է, եթէ «Արմ. բելլերիստ»

պ. պ. Վիսելովսկու և Բերբերեանի հրատարակած ժողովածուի՝ Բերբերեանի յօդուածի աղաւաղած և կրծատած թարգմանութիւնը. առանց յիշատակիլու անգամ յօդուածագրի անունը:

Ճերենցի «Երկունքը» ունի նոյն առաւելութիւնները, որ ունին նրա միւս գրուածքները, «Թէսոգորոս Ռշտունին» և «Թորոս Լևոնին»: Պուրս բերուած տիպերը աւելի գաղափարական են, քան բելական: Հերոսները և հերոսուհիները հին և ներկայ դարերու խառնուրդ են՝ խօսում են, գատում են—որպէս մեր ժամանակակիցները, բայց ապրում—որպէս մեր նախնիքները: Ճերենցի լեզուն միշտ ճոխ է և պատկրական: պատմութեան նիւթը ընտրումէ նա ճաշակով և միշտ հետաքրքրական է գարձնում: Եթէ այս բոլորին միացնենք այն վառ և աղնիւ հայրենասիրութիւնը, որով տողորուած են նրա երեք պատմական վէպերն ել, ու այն հանգամանքը, —որ «Երկունք» ի նիւթը առած է Սասունցիների կեանքից, հասկանալի կլինի, որ այս շարագրութիւնը կը կարգացուի, եթէ միայն չկարգացուել մինչև այժմ, մեծ հետաքրքրութեամբ:

2 Բարեգործութեան դիմակի տակ: Հեղն. Էմին Ցէր Գրիգորեանի: Դրամն 5 արարուածով 1895: Մեր աղքատիկ զրամատիկական գրականութիւնը հարստացաւ մի նոր և բաւական յաջող պիտսով, որի մէջ պատկերուեն գուրս է բերուած մեր արդի կիանքի մի զիծը: Պ. Կեղեքեանը զրամայի զիմանը գործող անձն հարստութիւն է ձեռք բերում: ամեն աեսակ կեղտոտ և անվայել միջոցներով: Մի կոզմից իւր այդ կեղտերը ծածկելու և միւս կողմից—իւր անունը և անձը փառաւորելու համար նա չի ինսյում հարիւներ տալ բարեգործութեան համար: Եթէ տալիս է ու ե բարի գործի համար 100. ր զրա փոխարէն զիւղացուց 200 է հանում: Հասարակութիւնը կեղեքեանին յարգումէ մինչև այն բոպէն, երբ նրա արարքները զիւղացիների շնորհիւ երեսն են հանուում: Այս մթին և զաղանի երեսյթի հետ զուղնթաց գուրս է բերած իդէալական մի արարածի վիճակը, որը անբախտութիւն է ունեցել այսպիսի մի կեղեքիչի աղջիկ լինելու և աւելի և անբախտութիւն այդ բոլոր աեսնելու և նրանից զզուելու: Աղջիկը գնումէ հօր գէմ և երբ վերջինս ուղումէ իւր աղջկանը մի թեթեսօլիկ, բայց հարուստ երիտասարդի տալ աղջիկը հակառակ հօր կամքին ամուսնուու է իր ուսուցչի հետ, որին նա սիրելիս է եղել: Բնատնեկան այս գժաղատութիւնը միանալով հա-